

## Ա Ռ Ա Կ Ք

ԴԵՂՁԱՆԻԿ ԵՒ ԱՂԱՆԵԱԿ.

Դեղձանիկին մէկը յանկարծ, ինչպէս եղաւ՝ չեմ գիտեր,

Թակարթի մէջ բռնընեցաւ, ինչ ընելը չէր գիտեր.

Վեր կըցատէր սղորմելին, վար կընետուէր յուսաձատ,

Ծակ մը չըկար որ դուրս ելլէ, կըզարնուէր պատէ պատ:

Հոն միամիտ աղանիի անփորձ ազատ ձագ մը կար,

Տեսնելու բան էր ինչ կերպով միւսին վերայ կըխնտար.

«Ամօթ, ըսաւ, թըռչունիկ,

Ամօթ քեզի դեղձանիկ.

Ինչ ըսիր ու ցորեկ ատեն թակարթին ընկար հուրի պէս.

Ես՝ հաւատա որ ոչ երբէք կըխաբուէի քեզի պէս».

Դեռ մեծախօս աղանեկին բերանն էր սուտ պարծանքը,

Տօրիկներովը ցանցն ընկաւ յանկարծ,—տես դու փորձանքը:

Եւ ծիւ եղաւ կըն եղաւ.

Թող չըխնտար այն միամիտ աղանին

Ուրիշներուն գըլխուն եկած փորձանքին:

ՔՈՒԼՈՎ:

Է Շ Ե Ի Ք Ն Ա Ր.

Իշուն մէկը Աթէնքին

Դաշտերուն մէջ մէկ օր մը

Մինչ կարածէր առանձին,

Ոտքին դըպաւ քընար մը.

Ո՛ գիտէ սր երգիչը

Հոն ձրգեր էր զայն ու երբ.

Կարծիք կընէ պատմիչը

Թէ շատ հին էր ձեն ու կերպ:

Իշուն ոտքին ցընցումէն

Ձայն մը հանեց քընարը.

Խեղքը թըռուց ցընծումէն

Մեր ականջեղ յիմարը.

«Ո՛ւհ, աս ինչ է, զըռնչաց,

Ես երաժիշտ եմ եղեր.

Այսուհետեւ ձայն ձրգած

Տես ինչ երգեմ ես խաղեր.

Սուտ է ուրեմն ըսածնին

Թէ քաջ քերթողը քիչ է.

Քաջ երգահան՝ հաղարին

Մէկն ալ ըսես նէ շատ է»: